# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<13>> [illegible] 2013 թ. N 36

ք. Արմավիր

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի $77^2$-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N190-Ա հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու 2012 թվականի աշխատանքային ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ, Հայկաշեն, Երվանդաշատ և Փշատավան գյուղական համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու նպատակով.

*կ ա ր գ ա դ ր ու մ  ե մ՝*

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Յու. Մանվելյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 20 աշխատանքային օրվա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2013 թվականի հունիսի 12-ի*
*N 36 կարգադրության*

## *ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ*

*Հանձնաժողովի նախագահ՝*

| | |
|---|---|
| Յու. Մանվելյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ. |

*Անդամներ՝*

| | |
|---|---|
| Հ. Հարությունյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ. |
| Հ. Ալեքսանյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ. |
| Գ. Գևորգյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ: |

***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***